

ԵՐԵՎԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 258.

Պատագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ գրոյց. Արարատի վրա. Վերադարձող գաղթականները օգտին. Նամակ Աղնախից. Նամակ Փոփոխ. Նամակ խմբագրութեան. Ներքին լուս. խմբագրութեան. ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արարատի լուս. խմբագրութեան. ՍԱՆՏԻՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. ՀԵՌԱՆՏԻՆ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱՅԻՆՕՐԵԱՑ ԶՐՈՅՑ

Սա մեծ ուշադրութեամբ հետեւում եմ թիւրքական գաղթականների վերադարձին:

Օրվայ խոշոր եղելութիւնը դա է. Հինգ թէ փոքր ասորի առաջ թիւրքական փախստականները մեծ մաս գալիս էր ամենախոշոր իրողութիւնը, մեր խօսքի, մեր մտքի միակ առարկան Գալիս էին հարկւրներով, հազարներով Այս վերադարձում են նոյնպիսի ահագին թիւերով:

Գալիս եւ գնալու... Զր գիտեմ, ընթերցող, որքան մտածել էք այս երկու գործողութիւնները վրա. Եկան, գնում են: Միթէ այնքան հասարակ շարժողութիւն է դա Այս տարի, արանային տար օրերը բացվելիս, դուք տեսաք թէ ինչպէս կռուները երանքներով գնում էին դէպքի հիւսիս Այժմ օգոստոսի երկու օրը կէսն է, եւ եթէ դուք ուշադրութիւն դնեք, երկրի տակ կը նկատէք վերադարձող, դէպքի հարաւ գնացող երանքներ: Ամեն տարի դուք տեսնում էք այդ երեւոյթները եւ, արդէ, հարկւն չէք պատուում նրանց բացատրելու համար. գիտեմ, որ այսպէս եղել է, այսպէս էլ կը լինի, քանի որ կայ կռուել, քանի որ նրան տուած է բնագոյ ապրելու այնպիսի տեղերում, ուր ոչ Միքիլի ձմեռը կայ, ոչ հասարակ խաղող ամառը:

Բայց ահա մարդիկ էլ, հազարաւոր մարդիկ, կռուներն հետ գնում են: Միթէ սա էլ մի պատուելի երեւոյթ է, որի վրա չարժէ գլուխ պտտել. միթէ այդտեղ էլ խօսում է նոյն թանկան օրէնքը, նոյն ճակատագիրը:

Շատ եւ շատ անգամ, թերթերով մեր արեւմտեան պատմութեան չէք, եւ կանգ էի առնում մի խորհրդաւոր հարցի առաջ, որ ինձ փառնալիս անուշեղի էր երեւում Մի երկրի, որ համարեա տարին տասներկու ամիս արեւմտայ է դառնում եւ դարձեալ իսպառ չէրկում իր բնակիչներին: Մի ժողովուրդ, որ ասոր—տամիս եւ հինգ դար կոտորվում է, մարդկային սպանանքի բոլոր պատկերներն է ներկայացնում, ամենափոքրից սկսած մինչեւ անպիսի չափերը,—եւ այդ ժողովուրդը դարձեալ մնում է, դարձեալ ապրում է խմբված միասին, իր սարի, իր դաշտի վրա,—սարեր ու դաշտեր, որոնց ծածած արեւնը, որոնց հող դարձեալ անտառների կոյտերը միայն բաւական էին ասորի ազգայնու, անիծված, չորացած հող համարվելու համար:

Ինչպէս հասկանալ այդ գաղտնիքը: Երբ ես կարգում էի, թէ ինչպէս հազարներով հայեր, աւերակ թողնելով իրանց աները, գնում էին օտար աշխարհ, մի կողմից հասնելով Լեւոնտան, միւս կողմից նոյն իսկ Չիւստանի ափերը, ես չէի զարմանում: Զէի գաղտնիքում ոչ տարածութիւնների վրա, ոչ փախստականի բնածո ուղղութիւնների վրա, ոչ մարդու ձեռքից դուրս են գալիս իր հողի վրա պահելու հնարաւորութեան բոլոր միջոցները, ինչ կարող էք սպասել նրանից: Ոչինչ հերոսութիւն, մարդկային հոգու ոչինչ արեւութիւն, ոչինչ բարձր աւազներութիւն չեն կարող փոխել իրականութիւնը—այդ ու ճախ, անպատիժ հնձող սուրբ եւ երկաթի գործածութիւնը մոռացած, բազմից հարուածների տակ ընկած հային մի ճանապարհ էր մնում—դուրս գալ: Գալիս է հարուածը, այնքան նա հեռու է չորացում այն առարկան, որին նա խփում է: Ինչ հարուածներ էին ինչում հայերի գըլ-

խին... Եւ ես չէի զարմանում, տեսնելով հային եղբայրական բուրգերի մօտ, Սպանիի կողքին, Գանգէսի ափերին, Կովկասեան լեռների վրա, Տրանսիլանիայում, Կամենեցի եւ Լվովի մէջ: Ժամանակով, երբ մէկը կը գրէ հայ գաղթականութիւնների պատմութիւնը, դուք կը տեսնէք, ընթերցող, թէ ինչպէս անդու ու անդադար մեռնում էր մեր երկիրը. մեռնում էր թէ իր լեռների վրա, իր դաշտերի կողքին, թէ օտարութեան, անյայտ ու անլուր աշխարհների մէջ:

Որքան էլ դառն, որքան էլ կսկծալի լինի այդ անդադար մահը, դուք, կանգնած օտակալ փախստերի առաջ, չէք կարող չը խոստովանել, որ եղելութիւնը, այնուամենայնիւ, բնական էր...

1895—1896-ի սեւ օրերը եկան մի անգամ էլ ապացուցանելու այդ տխուր անհրաժեշտութիւնը: Եւ, իբրեւ ակամատես այդ սեւ օրերի, ասում էի ինձ. «Տեսնում ես, ասողներ կան, թէ պատմութիւնը չէ կրկնվում, բայց դա հայոց պատմութեան համար չէ ասված. տեսնում ես, դարեր առաջ էլ այսպէս էր կատարվում իրողութիւնը: Բացվում էր սպանանքը, հազարներ ջարդվում էին, հազարներ էլ փախչում էին: Այսպէս էր մեռնում երկիրը: Պարբերաբար այս երկու իրերն էին յաջորդում իրար. սպանանքն ու փախուստը, սպանանքն ու փախուստը:

Սպանանքը տեսնեք մենք էլ, Եւրոպան ու Ամերիկան էլ: Փախուստը նոյնպէս տեսնեք: Ահագին խմբեր ընկնում էին Ամերիկա, Բուլղարիա, Կովկաս: Փախչում էին անասելի արագութեամբ, խելք ու միտք կորցրած: Եւ ով կարող էր ասել այդ փախուստականին. կանգ, կանգնելու: Ամենք գիտեն, որ դա կը լինի մի վայրենի, տմարդի խօսք: Եւ հոսանքների առաջը չը կտրեցին ոչ օտար պետութիւնների սահմանները, ոչ քաղցն ու սովը:

Այսպէս ահա, երկրի դատարկվելու դարաւոր իրողութիւնը կրկնվում էր մեր աչքի առաջ զորհուրդի փախստականի Այս մի երեւոյթը նորից եւ նորից կատարելապէս հասկանալի էր դառնում ինձ: Մեռնել... երկիրը չէ կարող չը մեռնել: 10—12 հազար Ամերիկայում, 20—25 հազար Կովկասում, 8—10 հազար Բուլղարիայում, Հայեր անտանելի կերպով պարզ էր...

Եւ որքան հասկանալի էր դառնում այդ մի երեւոյթը, այնքան անհասկանալի, խոր խաւարով ծածկված էր մնում միւս երեւոյթը—ժողովուրդը երկրում: Պատմական առեղծուածը լուծել անհնարին էր լինում: Զէի կարողանում գտնել գաղտնիքը, իմանալ թէ ինչպէս ձիւնի նման հալվող այդ ժողովուրդը ապրեց, մնացորդներ պահեց իր երկրում...

Ահա այդ առեղծուածն էլ այժմ է բացվում, հասկանալի դառնում:

Գնում են փախստականները: Եւ ինչպէս են գնում:

Ինձ պատմեցին այսպիսի փաստ: 60—65 տարեկան մի պառաւ կնիկ գնում է, տանելով իր հետ մի կտոր տղամարդի, որ ձեռքը զրկել է նրա ուսին: Բայցում են նրանք երկուսով դէպքի երկաթուղու կայարանը: Դրանք առանձին մի գնում, արժէ գնալ: Միթէ կոյրի համար մի եւ նոյն չէ ամեն ինչ երկրի տակ. միթէ պառաւ, մաշված կնոջ համար մի եւ նոյն չէ ապրելու թիֆլիսի մի անկիւնում, թէ թիւրքաց Հայաստանում:

Բարձր արտասանեցէք այդ հարցերը, ընթերցող: Ահա նա, այդ գնացող զոյգը, պատասխանում է ձեզ մի բանով. «Վախում...»

Վախում... Այս է եղել ամբողջ գաղտնիքը: Խորհրդաւոր, անլուծելի, անթի հանգամանքը այլ եւս չը կայ: Դրէք նրա մօտ վախում, եւ կը հասկանաք, որ եթէ թիւրքաց Հայաստանում հայ կայ, պատճառն այն է, որ կայ վախում...

Թիւրքաց փախստականը մեզ մօտ գալով, մեր պատմական ճակատադրի մի երեւոյթն էր: Երբ տալիս մեզ—փախուստը, երկրի մահը—Այժմ նա վերադառնում է, բաց անելով միւս

մեծ գաղտնիքը—երկրում հայ տարր մնալու գաղտնիքը:

Կռնեցէք փաստերը,—նրանք մեր օրվայ, ներկայ րօպէի փաստերն են:

Բարեկարգ, հզօր պետութիւնը առաջարկում է թիւրքաց փախստականին ընդունել իր հպատակութիւնը, վայելել անդորրութիւն, կեանքի եւ գոյքի ապահովութիւն: Փախստականը ուրախութեամբ կընդունէր այդ առաջարկութիւնը, բայց նա տեսնում է, որ հող չը կայ: Եւ նա համեմատում է այդ երկու դրութիւնները.—դրախտ, առանց հողի, եւ դըժուր հողով: Ո՞րն է լաւը: Հողի զաւակը առանց տառանմկլու լինում է, որ լաւը երկրորդն է. եւ այսօր նա գնում է իր պատմական, հազարամեայ դժուրը, որովհետեւ առանց հողի չը կայ նրա համար երջանկութիւն:

Գնում է նա: Տեղ կը հասնէ: Աւաղ, հայրենի դժուրը դռները պաշտպանում են հազար զինվորի ցեղերները: Բայց նա գնում է, նա եթէ վախում էլ է, գոնէ յոյս ունի: Յոյս ունի մի կերպով ներս մտնել, իր ընդհատած կեանքը շարունակել: Եթէ աղոյլի, նա դարձեալ կը ընէ իր մօժը, իր պապերի նման կոսներ կը տանէ իր հողի վրա, արտասուք թափելով, ախ ու վաշ անելով: Իսկ եթէ չի աղոյլի, նա կը փռվի ճանապարհին՝ թիֆ կամ քարի ետեւից արձակած գնդակը կըծում եւ եթէ մարդիկ չիմանան, երկինքը, որ լուռ նստում է ամեն մի խորշին, կը գրէ իր տարեգրութեան մէջ, որ դա, այդ դիակը, հողի համար էր գնում, հողի վրա քարն ու արտասուք թափել իր ուզումը...

Զգո՞ւմ էք դուք այն ահագին ոյժը, որ քաշում է այդ հազարները այնպիսի վտանգաւոր արիւնքաւ հեռաւորութիւնից: Վախում է դրա անուշը:

Բացատրեցէք այդ բանը, ինչպէս կուզէք: Ինձ համար դա նշանակում է ժողովուրդի շունչ, որ չէ կտրվում ամենատանկալի հանգամանքներում անդամ: Ինձ համար դա այն դարաւոր, անսահման, լեռնացած համբերութիւնն է, որը խորտակելու համար անգոր են եղել արեան գետերն ու ծովերը: Դա ժողովուրդի ճրագն է, որ չէ մարում նոյն իսկ անեղ փոթորիկներից: Վառ է այդ ճրագը, պղպուտ է նա թոյլ, դաւալ լոյսով, բայց պահվում է իբրեւ յաւիտենական արեւութիւն: Վախվում է իր հողի վրա նստած, իր հառաջանքներն ու արտասուքները այդ հողի մէջ թափող ժողովուրդի ջանքերով: Զանքը, այս, եւ ինչ հերոսութիւն կարող է համեմատվել նրանց հետ:

Գնում են հողի հերոսները: Եւ որքան շատ են նրանք: Բայց նայեցէք, տեսէք մի որ եւ է գրող, մի որ եւ է նրազօյն Պիղատոս կասեւ եւ կը ստորագրէ՝ «հայր վաշխատու է»: Ասում են եւ պրծնում, այլ եւս ոչինչ չը կայ դրանց համար: Իսկ այս հերոսները՝ Հողի համար դըժուրը գնացող այս հազարաւոր բազմութիւնը: Սրանց չեն տեսնում թշուառ Պիղատոսները: Բայց սրանք մեր ժողովուրդի ահագին մասն են կազմում, սրանք են մեր բուհը, մեր հաստատութիւնը: Եւ նայելով նրանց, ցնցոտիներով պատած, հազար ու մի դարդից թիւներ, որոնք մեր հպարտութիւնն են աւելացնում: Մենք յիշում ենք եւս պայքի մարդուն: Եւ հող է հարկուտ, նա էլ չէ ճանաչում մի դրախտ, որ հողի, իրական հողի վրա չը լինի հաստատված: Նա նոյնպէս գնում է հողերի տիրանալու: Բայց ինչպէս է գնում: Նրա առեղծուածը դրախտաւոր բուհն է ընթա-

նում, Կրուպի թղթանութիւնը, Մոտզէրի հրաբանները եւ «Էրուդ-դու» գնտականներն են: Գնում են, փախցնելով ամեն ինչ, որ կարող է ընդդիմադրութիւն ցոյց տալ, արգելք դնել իսկ հայր: Նա գնում է, բաց արած իր չոր կուրծքը, ձեռքին բռնած ջրհեղեղեան ցուպը: Ո՞րն է հերոս...

Այսպէս էինք մենք միշտ: Աշխարհ դարմացող մեծագործութիւններ մենք չենք ցոյց տըլու: Ինչքան չունենք Աւուստերիցի կամ Սեդանի մեծ գաղտնիքը—երկրում հայ տարր մնալու գաղտնիքը:

Երկրական փառքը: Որովհետեւ մենք հողի մարդիկ էինք, դժբախտ վախճան ունէինք եւ մեր ամբողջ մեծագործութիւնը դարերի ընթացքում միջինի աշխատութիւնն էր: Ինչեւ ջանքվածք, ծեփել, ծածկել ծակերը: Մենք վառ ենք պահում ճրագը մեր տան մէջ: Եւ գիտէք, ինչ ահագին գործ էր սա...

Այսօրվայ վերադարձը իր մեծ չափերով, իր ոգեւորութեամբ, իր հերոսական արհամարհանքով դէպքի առջեւում կանգնած վտանգները պարզում է մեր առաջ մի ժողովուրդի ստեղծագործող ոյժը, նրա այն գերազօյն ճիգերը, որոնցով ինչպէս եւ պահվում է մի ազգ:

Այստեղ գործում է մի տարերային գործութիւն: Դա բանաստեղծութիւնն է,—դա իրականութեան մի ինքն ըստ ինքեան իշխող, տիրող, կամը ու միտք նուաճող յօգիկան է:

Մարդը ամենահին ժամանակներից իմացել է հողով կապվել իր երկրի հետ: Յիշում էր քաղաքից հեռու Սաղմոսը, «Բարեկացող գետերի մօտ նստած էինք մենք եւ յիշում էինք Երուսաղէմը. մեր նուազարանները կախեցինք ուռիներից, ողբում էինք»:

Սա հայրենիքի կարօտն է: Եւ ես գիտեմ, որ հայն էլ, նստած որ եւ է Գանգէսի ափին, լա-ցով ու ախով էր յիշում իր հայրենի ուռիները: Բայց այդ լացը, այդ վիշտը այն է, արտայայտում, ինչ այժմ ենք տեսնում: Գանգէսի ափին լացող հայը յետոյ գնում էր իր գործին, աշխատում էր ահագին հարստութիւն, մոռա-նում էր ամեն ինչ եւ նրա որդիները արդէն անդրադարձնէին: Ներկական բարեկեցութիւնը խեղդում էր սրտի զգացմունքը. անտեսա-կան շաշը տանում էր հային աշխարհի չորս կողմերը, թոյլ տալով նրան մի մի հաւանչել հայրենի ուռիների համար:

Այսպէս չեն մեր գնացողները: Նրանք հող են ուզում, հող, իբրեւ ապրուստ, իբրեւ գո-յութիւն, իբրեւ սկիզբ եւ վերջ: Ուրիշ չան գոյութիւն չունի նրանց համար այս աշխարհում: Նրանք բանաստեղծներ չեն, հայրենա-սէրներ չեն, այլ հողի մարդիկ են, հողին կը պառ, առանց հողի՝ ոչնչութիւն, անյատակ դժբաղդութիւն: Ամեն փիլիսոփայութիւն, ա-մեն դատողութիւն նրանց համար պարփակված է այս խօսքերի մէջ. «Ես հող ունեմ եւ ապ-րում եմ»:

Այժմ հասկանալի է, թէ ով է վերադարձո-ղը—Հողը, ժողովուրդի եւ ազգի արմատը, այն սեւահողը, որ անդադար մշակվում է, անդա-դար պահպանում է մի ազգի կենդանութիւնը: Վերադարձողը գիւղն է, հողագործն է: Վա-ճառականը վաղուց է տեղ տաքացրել մի որ եւ է անկիւնում, իր ստացած չափով խլացնե-լով հայրենիքի կարօտը: Այսպէս էլ եղել է միշտ: Հողագործը նստել է հողի վրա, վաճա-ռականը գնացել է Կալկաթա, Լվով, Եւսկա եւ կորել է այնտեղ:

Երկիրը, ուրեմն, չէր կորցնում իր հիւթերը —հա ինչու էր նա ապրում:

Այժմ մի հարց.—ինչու այդ մեծ ոյժը, հողի մարդը այնքան արգասաւոր չէր երկրի համար, ինչու նա մեծ գործեր կատարել չէր կարողա-նում:

Ներկայ րօպէն այս հարցերի պատասխանն էլ է տալիս—Որովհետեւ, ասում է նա, հողի հե-րոսները միշտ անօգնական էին, միշտ աչքից ընկած, արհամարհված: Նրանց դերը չը հաս-կացան, նրանց կատարած ահագին գործը ան-արգելած էր միշտ:

Ծիշտ չէ:

Ահա գնում են հազարաւոր մարդիկ, պատ-րաստ ամեն տեսակ տանջանքներ յանձն առնե-լու մայր-հողի համար: Բայց դատարկ ձեռքեր, ցնցոտիներ, մուրացկաններ են դրանք: Պէտք է օգնել, որ նրանք տեղից չարժեղան: Եւ ինչ:

Բարեխիղճ, հասկացող հասարակութիւնը կը փայփայէր այդ ագին եւ պատուական տարրը, մայր-հողի այդ կենդանային ոյժը: Բայց մե-զանում...

Մի շարաթ է, ես հետեւում եմ, թէ ինչ կա-նեն Թիֆլիսի հայերը «Մշակը» ամեն օր հրա-

